ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1998-99 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 1998-99 ուսումնական տարվա բացման արարողությունը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի: Ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, դասախոսներ, ծնողներ ու հարազատներ, հյուրեր:

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Ճեմարանի երգչախմբի կողմից կատարվեց Հոգևոր Ճեմարանի քայլերգը: Բացման խոսքով հանդես եկավ Ճեմարանի փոխտեսուչ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը: Այնուհետև Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանն ընթերցեց Մարկոսի Ավետարանի Դ գլխի 1-6 հատվածը, որը «Սերմնացանի առակը» ներկայացնող պատմությունն էր: Ըստ էության այն վերաբերում է ամեն անձի, իսկ տվյալ պահին ուղղված էր Ճեմարանի սաներին: Ավետարանի ընթերցմանը հաջորդեց «Հայրենիքիս հետ» երգը:

Իր զեկուցման մեջ Ճեմարանում տարվող ընթացիկ և կատարվելիք ապագա աշխատանքների մասին խոսեց տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Հայր Սուրբն իր խոսքում նշելով ապագա ուսումնական տարում Գևորգյան Հոգևոր Ճեմարանում թե՛ ուսման, թե՛ կարգապահության բարձրացման կարևորությունը, տեղեկացրեց, որ 1998-1999 ուսումնական տարում Ճեմարանում կուսանեն 115 լիիրավ ուսանողներ և 15 ազատ ունկնդիրներ: Ինչպես սերմնացանը երբ ցանում է իր սերմերը՝ աղոթքով, հույսերով և ապագայի գալիք արդյունքն ստանալու ակնկալիքով է դրանք հանձնում հողին, այդպիսի հավատքով էլ Ճեմարանի տեսուչը նայում է իր սաներին: Այդ միտքն ընդգծվեց ներկաներին ուղղված տեսուչ Հայր Սուրբի խոսքում.

«Վեհափառ Տեր, գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանում ուսումնական տարեմուտ է. ամառվա արձակուրդից ետք թարմացած ուժերով և նոր տեսիլքներով եկել ենք՝ միատեղ կերտելու մարդը, հայը և հոգևորականը:

Այս միջավայրում է Ս. Գրիգոր Լուսավորիչը հիմնել առաջին հոգևոր դպրոցը. այստեղ է Ս. Մեսրոպ Մաշտոցը հայացրել Մեծ Վարդապետի հավիտենական ուսմունքը, այս միջավայրում տակավին վեր է հառնում Խրիմյան Հայրիկի առաքելատիպ կերպարը, և տակավին արձագանքում են Կոմիտաս Վարդապետի երկնասաց մեղեդիները: Այս վայրը, շուրջ 1700 տարիներ շարունակ, իր բոլոր վերիվայրումներով, եղել է հայ հոգու միջնաբերդը, դաստիարակել մեր ժողովրդին հայաբար և հայրենի, աղոթել և խոսել մեր նախնիների և մեր կենդանի Աստծո հետ:

115 լիիրավ ուսանողներ և 15 ազատ ունկնդիրներ ու քահանայացուներ: Այս թվերով ենք սկսում ուսումնական տարին: Արանք սոսկ թվեր չեն: Ինչպես

սերմնացանը, երբ ցանում է իր սերմը, իր ափի մեջ զգում է սերմերից կյանք շողարձակող ջերմությունը, աղոթքով, հույսերով և ապագայի գալիք արդյունքով դրանք հանձնում մայր հողին, նույն հավատքով և տեսիլքով մենք մոտենում ենք մեր սաներին: Նրանց հետ միասին մուտք ենք գործելու երրորդ հազարամյակ: 1700-ամյակից այն կողմ նրանք են կերտելու մեր հոգևոր պատմությունը:

Ինչպես, սակայն, Ավետարանն է ասում, եթե ցորենի հատիկը չմահանա, ինքը լոկ միայն գոյություն կունենա. այդ մահը սակայն անիմաստ և ապարդյուն մահ չէ, այլ, տառապանքով ու չարչարանքով, հյուլե առ հյուլե մերվելով հողին ու ջրին, անհայտացման ընթացքում նոր կյանք է պարգևում՝ մեկի դեմ 30, 50 և 100:

Այս տարի մենք էլ ավելի խիստ ու պահանջկոտ ենք լինելու մեր սաների նկատմամբ, լինի դա ուսման կամ կարգ ու կանոնի հարցերում: Ում շատ է տրվում, նրանից շատ է պահանջվում:

Վաղվա եկեղեցականն ու հոգևոր առաջնորդն այլևս իրավունք չունի լինելու թերի և անպատրաստ: Ինքը պիտի լինի նոր Մովսեսը՝ առաջնորդելու ժողովրդին դեպի խաղաղ նավահանգիստ: Ինքը պիտի լինի Նաթանը, Երեմիան և Եսային՝ խարազանողն անարդարության և վեր պահողը ճշմարտության: Ինքը պիտի լինի խոսնակը Աստծու, և իր բերանից, սրտից ու բովանդակ կյանքից արձագանքելու են միայն աստվածային պատգամներ:

Գևորգյան ճեմարանի գոյությունը և հարատևումը բազում զոհողությունների և ջանքերի արդյունք է՝ Վեհափառ Հայրապետից մինչև սարկավագը, դասախոսներից մինչև բարերարները:

Ներդաշնակորեն առաջ ենք տանելու մեր աշխատանքը՝ քաջ գիտենալով, թե մենք կարող ենք ցանել և ջրել, սակայն Աստված է, որ կաճեցնի և կարդյունավորի սպասվող հունձքը:

Վեհափառ Տեր, Դուք Ձեր համակ կյանքը անմնացորդ կերպով նվիրել եք Հայ Եկեղեցուն, հոգևոր գրականությանը և ուսմանը: Հաստատապես այս հարկը Ձեզ համար ամենահարազատն է ու սրտամոտը: Տա Աստված, որ մեր սաները դաստիարակվեն ոչ միայն Ձեր խոսքերով, այլև Ձեր հոգևորականի տիպար օրինակով:

Օրհնեցեք, Վեհափառ Տեր»:

Տեսուչի այս խոսքից հետո հնչեց Էդգար Հովհաննիսյանի «Երևան-Էրեբունի» երգը:

Այնուհետև, ճեմարանի տեսուչի խնդրանքով, Վեհափառ Հայրապետն Իր օրհնության խոսքն ուղղեց կրթօջախի սաներին՝ այն ավարտելով պահպանիչով. «*Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա, պահպանեա, օրհնեա և ծաղկեցո զԳևորգեան Հոգեւոր ճեմարանս, զմիաբանութիւն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, օրհնեա, Տէր, զտեսչութիւնն, զուսուցչական կազմն և զհամայն ուսանողութիւնս, զբարէրարս նուիրաբարոյ հաստատութեանս այսորիկ ընդ հովանեաւ Սուրբ Խաչիդ քո՝ ի խաղաղութեան: Փրկեա Տէր յերևելի և աներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն*»:

ՄՈՒՇԵՂ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ